

մարդ պիտի տեսնէ որ, Մեծ. Ռուսիանանի տառնախօսութիւնները, եւ թէ ուրիշ գաղտնի նպատակ մը չունին, բարբոթին ի դուր եւ վայրագորհն:

Ինչ էր ուրեմն եւ ինչ է Մեծ. Ռուսիանանի հակառակորդ կարծած երեսփոխաններուն առաջարկութիւնը՝ նորա կառավարիկն թէ.

Նախ՝ Սոյ եւ Աղթամարայ թեմերուն մէջ ժողովրդին ընտրական իրաւունքն արդէն իսկ բռնաբարութեմ է, մէկուն մէջ բողոքովն ցեղական կամ աշխատանքան եղած է, եւ միւսին մէջ վանական կամ բռնական, եւ ահա սոյն բռնաբարութեան կենդանի արդիւնքները. Նիկիոյոս եւ խաչատուր. մեր աշխին առջեւն են, որոց կաթողիկոսանալուն դէպքերը հինգ վեց տարին ի վեր համայն աղիւսնոց սիրան ու միաբը ճարակող ժանտախտ մ'ըղած են:

Երկրորդ. ընտրութիւնը դաւաւանայոց ձգեւել համար՝ ոչ դաւաւանական ընդհանուր ժողով կայ, եւ ոչ ընտրութեան տրամադիր եւ ընդունակ ժողովուրդ, եւ թէ ընտրութիւնըն ալ ժամկիւնից ձգուի, տաքնապն ու խռովութիւնը պիտի չարունակուին ի վնաս խնայի թեմականաց, մէկ կողմէն Նիկիոյոս եւ խաչատուր պիտի չանհատարեալ իրենց կաթողիկոսութիւնը, եւ միւս կողմէն ուրիշ եպիսկոպոսներ պիտի որոնան՝ ոչ թէ ժողովրդին՝ ալ քանի մը իշխանաց սիրտը, եւ ընտրելի պիտի ներկայանան, որով եւ անընդհատ պիտի տաքնապին թէ՛ թեմականը եւ թէ՛ Ազգային վարչութիւնը, ինչպէս որ արդէն կը տաղնապին երկար ատեն խնդիրը տարտամ վիճակի մէջ մնալուն համար:

Երրորդ. Ազգին եւ Եկեղեցւոյ ճշմարիտ շահը կը պահանջէ, սոյն երկու կաթողիկոսութիւններն իրենց չըջանին մէջ հաստատել պահել եւ այս ճանապարհաւ, Եւսիւմիոսի ընդհանուր կաթողիկոսութեան հայրապետական նախնի իրաւունքները՝ (որոնք այժմ բռնաբարութեմ են)՝ ձեռք բերելու փոյթ առնել, եւ Սոյ Հայկական կաթողիկոսութեամբ՝ Լիբանանու անտի-հայկական կաթողիկոսութեան հետամուտիւնն հեղինակաւորելու, եւ ոչ թէ ըստ անբաղաճապէս ոգւոյ Արմենիոսի Իսաբանիկ յայտարարութեան (տես Օրագիր թիւ 262-263) ջանալ յիշաւկաթողիկոսութիւնը ջնջել որով անշուշտ պիտի ջնջուին թէ՛ ընդհանուր հայրապետութեան իրաւունքները, եւ թէ պիտի կարուսանենք եկեղեցւոյ Հայկազուն ժողովուրդը:

Չորրորդ. Սոյ թեմականաց ընտրական անձեռնհասութեան պատճառաւ եւ իրենց թախանձաօք՝ տեղւոյն առաջնորդներն արդէն իսկ Ազգային վարչութեան կ'ընտրուին, եւ մինչեւ ցայսօր որո՞ւ մտքէն անցաւ երբեք թէ վարչութիւնը գաւառական իրաւունքը կը բռնաբարէ, եւ միւր թէ երբ գաւառական ընդհանուր ժողովներ հաստատուին, վարչութիւնն ամենայն յօտարութեամբ թեմականաց պիտի չձգէ՝ իրենց իրաւունքը:

Եւ հինգերորդ. Մահմանադրութեան վերաբնութիւնը յետաձգուելուն եւ Սոյ ու Աղթամարայ մէջ թեմական ժողովներ չըլլալուն պատճառաւ, եւ տառապնալ ժողովրդին չընտրող անընդմիջական դարման մը մատուցանելու նպատակաւ, հարկ է անշուշտ նախորդ երեսփոխանական ժողովոյ որոշումը յարգել, յիշել թեմերուն համար փութով արժանաւորութեան հարկեր ընտրել, օրինաւոր հարձանգներ տալ եւ թեմականաց ընտրական իրաւունք սկզբունքները վերաքննել Սահմանադրութեան մէջ մտցունելով արդարեւ որով հնար

ըլլայ ապագային մէջ ամեն զեղծմանց առաջն առնուլ:

Մեր խիղճը կը վկայէ որ, սոյն եղանակին մէջ ոչ թէ իրաւունք յախընտրութիւնն ալ եւ իրաւունք զտնտրութիւնն ալ զործնական բարիք մը կայ իսկ եթէ Մեծ. Ռուսիանան էֆէնտին երեսակցական տաղաւայ վտանգ մը կը նշմարէ եւ կը պատրաստուի տակալ մենք արդէն իսկ ներկայի մէջ չընդապատած վտանգները կը տեսնենք եւ կը ստականք ուրեմն որչափ երկարին՝ այնչափ պիտի ծանրանան, եւ Ռուսիանան էֆէնտին յախտեան պատասխանատու պիտի մնայ ապագայ սերունդին եւ ազգային պատմութեան դատաւարներն առջեւ: Սոյն պատասխանատուութեան երկարաց է նաեւ Օրագիր Մեծ. Խմբագիրն ալ, որ մէկ կողմէն կը խոստովանի թէ հաղորդ ժողովուրդը տակալին իր իրաւունք վրայ դադարեալ չունի (Օրագիր թիւ 260), եւ միւս կողմէն այնպիսի ձեռնհասութիւն կուտայ մեր վանքի եւ Աղթամարայ խեղճ եղբայրներուն, որ իրենց մտքէն անդամ անցած չէ, եւ անհամբեր երեսփոխանական ժողովին ընտրութեանն ու օգնութեանը կապանքն:

Երանի՛ թէ մարդիկ իրենց խիղճին ճշմարիտ դիտակցութեանն անսային, քան թէ անխոյուն պարագայներու ազդեցութեան, որ շատ անգամ պղծարար աղբիւր մ'է շօշալիկի հակասութեանց:

ՄԵՍՐՈՊ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԱՐՁՆԱԼ ՅԵՆԻՊՈՍ

Արդարաւոր Մահման 995 թուով եւ Մեհրապ Եպիսկոպոս յիշատակ վերնադրով հրատարակած մեր յօդուածոյն դէմ. Արշալուսոյ 891 թուով եւ Սեփեռ Եպիսկոպոս ի Կ. Պօլիս վերնադրով նամակ մը տալովրուած է, որուն մէջ փաստաղբուրկ շատախօսութեամբ այսպէս կը պատասխանուի մեզ:

« Մասին ուխտ ըրած է Եղիպտոսի ազգային դործոյ վրայօք ստոյգութիւն չըտալ. — Մասին ինքը շարագրած է Մեհրապի դէմ եղած յօդուածը Սեփեռն եպիսկոպոսի թեմադրութեամբ. — Յակոբեանք ազգապէր են, Յակոբեանք ազգին հայիւ տուած են եւ Երուսաղէմի կալուածական իւրեղիւր լրացուցած են. — Յակոբեանք գալստեան կտակը յօդուած Ազգին գործադրելու փոյթ կը տանին. — Մեհրապ եպիսկոպոսը՝ ջրանցքի բացման պատրուակաւ չէ որ յեղիպտոս դնացած է. — Մեհրապ Եղիպտոսի օրինաւոր առաջնորդն է. — Մեհրապ շարունակ Եղիպտոսական կառավարութեան մօտ գտնուող հիւպոտոսաց յաճախակի այցելութեանը կ'արժանանայ իր ամենամեծ արժանաւորութեամբ, մինչդեռ Եսայի Պատրիարքը չ'արժանացաւ, եւ Եղիպտոսի դատելուն մէջ լիովն օրինակ տեսարաններ կը քաշէր. — Երուսաղէմի միաբանութիւնը թող յայդ կտրէ իր կողմէն յեղիպտոս առաջնորդ զրկելու. — Աստուածատուր վարդապետը անբարոյական է, որուն վրայ եթէ ստիպեն կը խօսինք. — Պօլսոյ Պատրիարքը Սեփեռն եպիսկոպոսին դաս կ'առնու եւ միշտ մեղադրանաց արժանի է. — Մեհրապ եպիսկոպոսը իր երիտասարդական հասակին մէջ իր ապագան դիտէ հոգալով թող այդ մասին փոյթ չընէ Մահմանադրութեան, եւ այլն եւ այլն »:

Կը հարցնեմք Արշալուսոյ նամակագիրին.

Ինչ իրաւունքով յարձակում կ'ընէ Մահման դէմ ինչպէս գիտէ՞ք Սեփեռն եպիսկոպոսը թեմադրած եւ Մահման շարագրած է Մեհրապ Եպիսկոպոս յիշատակ վերնադրութեանը, եւ արդեօք եւ անոնց

ներշնչութեամբ կրցաւ սոյնպիսի հրատարական դուշակութիւն մ'ընել թէ խօսական ցնորից մէջ երազեց ինչ է Յակոբեանց ազգապետութիւնը: Ազգատոյ իրաւունք բռնաբարութիւնը, անմեղ մարդկանց հալածումը եւ Եղիպտոսի ազգայնոց տորիներով տակնուվերայութիւնը ինչ հայիւ է իրենց հայիւր, որ չը պարունակէր Երուսաղէմի կալուածոց երեսնամեայ եկամուտից ցուցակը եւ յափշտակուած դուստրները, ի՞նչ եւ ինչպէս լրացած է Երուսաղէմի կալուածական խնդիրը, որ կալուածագիրը տակալին Յակոբեանց ձեռքը կը դնուին եւ ամեն հնարք ի գործ կը դնեն որ տիրոջը չ'յանձնեն:

Ինչ անամօթութիւն է ըսել թէ Երուսաղէմի միաբանութիւնը չըդար իւր կալուածները ստանալուն, մինչդեռ Եսայի Պատրիարքը, ինչպիսիքս եւ Սեփեռն եպիսկոպոսները, Աստուածատուր վարդապետը եւ այլք ամիսներով ջան ի գործ եղին միանգամ ընդմիջու լուծել Երուսաղէմի կալուածական խնդիրը, եւ սակայն ցարդ անուժանելի մնաց, Յակոբեանք ինչո՞ւ չը յանձնեցին ինչ որ յանձնելու էին, եւ ինչպէս կը համարձակին ըսել թէ ազգային դործոց չ'են խառնուիր մինչդեռ ամբողջ միաբանութիւնը բրած են իրենց ձեռքը եւ Նուպար փաշայի անունը յախտեան արտաւորելը կը ջանան, եթէ Յակոբեանք գալստեան կտակը յօդուած Ազգին գործադրել կը ջանան, հապա որո՞ւ ձեռքով քառասուն հինգ հազար (45000) իւրայի ահազին գումարը դրօք փակելովք ամբարձաւ եւ ունչացաւ Ազգին համար: Այս է Յակոբեանց ազգապետութիւնը, զոր կը ներբողէ Արշալուսոյ Ափսոս, հաղար արիւնս

Կը հարցնեմք Արշալուսոյ նամակագիրին.

Եթէ Մեհրապի յեղիպտոս առհերա պարտաւոր Սեփեռն ջրանցքի բացման ներկայութիւնը չէր, ինչո՞ւ առաջնորդական հրովարտակաւ չըդնար, եթէ ջրանցքի բացման հանգիստին մէջ չըլլայաւանակեցաւ, ինչո՞ւ տեղեկագիր չըհաղորդէր Ազգային վարչութեան, եթէ Տրապիզոնի վիճակէն պաշտօնապէս հրաժարած է, ուր է իր պաշտօնական հրաժարագիրը, եթէ Սահմանադրապէս առաջնորդ կաղուած է յեղիպտոս, ո՞ր է Սահմանադրական վարչութեան ստացած առաջնորդական կոնդալը եւ սէրութեանէն ստացած հրովարտակը, եթէ Մեհրապ ազգային Սահմանադրական վարչութեան պաշտօնակց է, ինչո՞ւ չ'անագարբեր նոյն վարչութեան հըրամանը կատարելու, որ զինքն ի Պօլիս կը կոչէ, ինչ Սահմանադրական պաշտօնակցութիւն է այդ, որ փոխանակ վարչութեան հրամանին հպատակելու, կ'առաջարկէ որ իր մասին Նուպար փաշայի հետ բանակցին, ոչ ապաքէն յայտնի խաղախութեան եւ ապրտաւորութեան անարդ միջոցներ են այս ամենը: Եւ միւր Սըշալուսոյ ձեռքեքեքալ մի կնութիւններով կ'ընեն արդարութեան կերպարանք առնուլ ի՞նչ կարող է ըսել թէ Յակոբեանց ստորկներուն ձայնը ճշմարտութեան ձայն է: Ո՞վ կարող է ըսել թէ Մեհրապի հիւպատոսաց հետ ունեցած յաճախակի այցելութիւնը առաջնորդական արժանաւորութեան ապացոյցներ են, եւ Եսայի Պատրիարքին Եղիպտոսական հնութեանց տեսարանները լուսանկարով քաշելը՝ անպատուութեան նշան: Ինչ արժէք ունին որչափ հասարակութեան առջեւ սոյնօրինակ ժանգաճար դատողութեանց վիժմունքները, կամ լաւ եւս ըսել պատուական երկու պիտիւններ:

Կը հարցնեմք Արշալուսոյ նամակագիրին.

Ե՛րբ եւ ինչ հետապնդութեամբ ջանահար եղաւ Երուսաղէմի միաբանութիւնը իր մէջէն առաջնորդ զըրկել յեղիպտոս: Եւ փիթէ իրաւունք չունէ՞ր, եթէ աշխատէր զրկելու: Ե՛րբ պատրուակներու եւ խաբարայութեանց դիմեց առաջնորդութեան համար, ինչպէս Մեհրապ: Ե՛րբ Նուպար փաշայի եւ Յակոբեանց տաքն ինչաւ եւ Արշալուսոյ ներքողական բարեխօսութեանը ապաւինեցաւ, ինչ հիմամբ եւ ինչ խղճով անբարոյական կանուանէ զԱստուածատուր վարդապետն: Միւր խժժական բարբարոսութիւն չէ՞ մերձ ի մահ գանակածել զվարդապետն եւ յետոյ անամօթար ելլել ու ըսել թէ՛ անբարոյականութեան հիւսնագացած է, ինչէ՞ն կը դուշակէ Արշալուսոյ նամակագիրը, որ Պօլսոյ Ամեն Պատրիարքը Սեփեռն եպիսկոպոսին դաս կ'առնու: Միւր կ'ընդունէ՞ ազգային վարչութիւնը երբ զինքն նախը առաջնորդն Մեհրապ ի Պօլիս կը կոչէ եւ կը փափաքի տեղական խռովութեանց առաջն առնուլ, եւ միւր կը մեղանչէ՞ մեք, երբ կը յորդորեմք զՄեհրապ ապստամբութեան եղիւր չ'ամբառնալ եւ իւր ապագան սեռա քողով չ'ըզարկել:

Արդ՝ մեր հարցումներուն պատասխանը Արշալուսոյ նամակագիրն թող լով կը կնքեմք մեր խօսքը, բացարձակ յայտնելով ի լուր աշխարհի. — Գանի որ Յակոբեանք Երուսաղէմի երեսնամեայ հայիւ եւ կալուածագործերը յանձնած չեն, յանցաւոր են ամեն մասամբ, քանի որ ազգային գործերը կը պղտուրեն եւ իրենց շահը կ'որստան շահաւոր եւ առաւել են, քանի որ Մեհրապ Յակոբեանց կ'առաջարկէր կը շարժի նոյա կոչ Երեմիէն եւ ոչ Եղիպտոսի առաջնորդը, եւ քանի որ ազգային վարչութեան հրամանը կ'անդունէ եւ իր սին շահուց համար յեղիպտոս կամ բանայ, ապաքէն է թող Յակոբեանց կամայ եւ տկամայ ստորկները որչափ կուղեն կողորդին պատմուեն՝ օրինաւոր եւ ազգապետ Յակոբեաններ պտուարով:

Թող որչափ կուղեն Երեմիէն կարգայ անդայ Արշալուսոյ, խնդիրը պարզ է, դատաւարան տիներեւ եւ դատապարտութիւնն հանրած անօթ:

Նիկիոյոսից սեպտ. 30 թուով հետեւեալը կը գրեն մեզ:

« Վարդապետ խաչին կիրակի գիշերն Արմաշու մէջ տակալի ոճրագործութիւն մը պատահեցաւ հետեւեալ պարագաներով:

« Առաքաւարցի Յահնապետեանը ուխտի դացած ըլլալով, իրենց հետ գտնուող Չափուշ Համարձում առնուն անձը կիրակի գիշերն զինովցած վանքին դռնէ հրապարակել թմբուկ զարնել կուտար: Եւս 6 ին միջոցները վանքին ձեռքարձանն ու սպասաւորները՝ գործներին լինցուցած վանքէն դուրս կեննեւ սրճարան մը կերթան, եւ նոյնին թմբուկարձանն ուս մօտ, սրպէս զխաւրձ մը խմելով յորհուրթիւն առնուն, Չափուշ Համարձումը՝ որ բերանը դանակ մը առած թմբուկարձաններուն առջեւ կը կաքաւէր, ձեռքարձանն տեսնելուն պէս, դանակը ձեռքը կ'առնու, քովը կերթայ եւ Գուն Առաքաւարցի ըլլալով ինչո՞ւ մեզ հետ չեւ նստիլ եւ Գ Արմաշիններու հետ կը նստիլ ու քսելով դանակն երկու անգամ ձեռքարձանին փորը կը խոթէ կ'ապանէ ու կը փախչի, Բաց կը համարն կը բռնեն զինքը եւ կապած Նիկիոյոսի կը բերեն: »

2 հոկտ. 1870 թվադիր

Լուսավորչի ճեշ.

Ինչպէս ասիլէ յառաջ ձեր ազգո-
գրուտ լրագրոյն միջոցաւ ծանուցինք
արդոյ հասարակութեան, եւ ի մաս-
նաւորի հրաւեր կարգացինք վարժա-
րանիս նախնի բոլոր սանուց, որ յօ-
գուտ Ս. Ներսիսեան վարժարանին
նպատակաւ սահմանեալ Ն. Սանուց
ընկերութեան բարեհաճին մասնակ-
ցիլ:

Այս անգամ դոհուլութեամբ կ'իմա-
ցնենք որ բաւական ուսումնասէր եւ
յառաջադիմութեան բարերար ան-
ճանց կողմէն դոհուլութեան ընդունե-
լութիւն դատած ըլլալով մեր նոյն հը-
րաւէրը, պարտք կը համարինք ի
խորհուրդ կուէլ թէ՛ իրենց բա-
ժանորդութեամբ ընկերութիւնս պատ-
ուող ազգայինը, եւ թէ՛ համայն վար-
ժարանի Սանուցը, ներկայ դասուի
յառաջիկայ կիրակի, հոկտ. 4 ժամը
7 1/2 ին ի Ս. Ներսիսեան վարժարա-
նըս, ուր նորակազմ ընկերութեան
յարատեւ ապահովութեան եւ վար-
ժարանիս աւելի նպատակաւոր ի-
նչելու յարմար դատուած պայմանե-
լուն ու միջոցներ պիտի կարգադրուին:

Կը յուսամք թէ մեր սոյն ընդհա-
նուր հրաւերն եւս, նախորդ հրաւե-
րինանց ընդունելութեանը կ'արժա-
նանայ, ի դոհուլութեան թէ՛ մեր եւ թէ՛
բոլոր ազգայնոց:

Հաճեցէք . . . տէր, սոյն ծանու-
ցումը ձեր ազգոգրուտ լրագրոյն յա-
ռաջիկայ թերթովը հրատարակել, ըն-
դունելով մեր խորին յարգանաց հա-
ւաստին:

Հոգաբարձութիւն Ս. Ներսիսեան
վարժարանի խաղիւղի
(Ի. Ի.)

ԱՌ. ՍԱՆՍ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ
ՈՐ Ի ԽԱՅՐԻՆՈՂ.

Ազնիւ Սաներ.

Վերջի ատեններս տեսայ մի յայտա-
բարութիւն ի խաղիւղի, ծանուցանել
Ներսիսեան Սանուց ընկերութեան կազմն,
որոյ անձնիւր Սան ջան դնէ:

Լաւ էր այս ընկերութեան նպատակ-
առնել վարժարանին, բայց ցաւիմ թէ իւր
կազմակերպութիւնն ուշիմ խորհրդածու-
թենէ վրիպեալ:

Այս կերպը ցաւ պատճառէ ինձ եւ
ձեզ եւ դերեւս այսօր Ն. Վարժարանի
ազնիւ հոգաբարձուաց:

Ազնիւ Սան.

Հարցում մը ունիմ քեզի եւ իրաւունք

մը պաշտպանելու: Բայց լաւ ուշ զիւր զի
քեզ ալ պատկանի այս:

Հարցունեմ թէ ուստի ծնաւ այս Սա-
նուց ընկերութիւնը:

Բառին արտայայտութեամբ հաւատ-
տեն թէ իմ դաւակն է. դարմանք մեծ,
հոս մտածեմ թէ առանց երկնելու թնչ-
պէս ծնայ այս դաւակը, մտածեմ թէ դա-
ւակը իմա չէ՛ բայց անուան իմա է, խոր-
հիմ եւ յափշտակութիւն մի նշմարեմ:

Ուստի ծնաւ այս դաւակը:

Նորը գիտեմ եւ պայծառ տեսնեմ
թէ Ն. Վարժարանի արդի հոգաբարձու-
թեան ձեռնառնէն է որ իմ անուան կրէ:
արդ քիչ խօսիմ եւ ջուր կ'որովմքիմ խոր-
հուրդածութեանը յանձնեմ. մտածէ պո-
հիլ մը. բայց ես հաստատ համոզուեցայ
թէ մուլթ վարատեցաւ, յափշտակութիւնը
յերեւան ելաւ:

Հարցունեն ինձ թէ ով ես դուն եւ
ինչ է այդ յափշտակութիւնը:

Ես Ներսիսեան վարժարանի Սաներն
եմ, իմ անունն Սան է, այն իմ սուրն է,
եւ այն տանը դաւակն եմ, դու ալ իմ եղ-
բայրս ես, եւ որովհետեւ այս իմ սկիւ-
կանութիւնս է, եւ ես միայն հոս կիշխեմ,
ոչ ոք կարող է այս տանը մէջ իմ իրա-
ւունքս բռնաբարել, եւ իմ անուամբ
կեղծեալ ընկերութիւն մը հաստատել:
Աստուած, ճշմարտութիւն եւ իրաւունք,
մտածէ այս բառերը եւ թող որ ես իւ-
լեմ իմ տանս մէջ. զի ամեն փաստաբա-
նական, անհեաններու մէջ այսպէս վճռեն
եւ արամբարձ այսպէս եղբակցեն:

Դերեւս դատուին ըսողներ թէ ոչ ոք
զքեզ կարողիք, դուն ջուր տանք տէրն ես
եւ իշխանը:

Ներսիս ինձ պատասխանել այն հարց-
ման երկու խօսքով:

Ի՞նչ է ուրեմն այն Սանուց ընկե-
րութիւնն որ ի հիստարակ հնչակե-
ցին, որոյ անունն եւ կազմակերպու-
թիւնն կամ կազմակերպութիւնն ու եւ
նոնք խիստ հակասական են:

Ես Սանուց ընկերութիւնն ըսելով ըմ-
բռնեմ զարդոյն Սաներուն հաւանու-
թեամբ հաստատուած վաւերացուած եւ
անոնց պաշտպանութեան ներքեւ ընկե-
րութիւն մը. այս է իմ ճշմարիտ ըմբռ-
նումս այս կէտին վրայ, եւ չեմ ներքե-
ր եւ է ինքնակազմութեան հաստատուած
ընկերութեան տիպոսը իմ անուամբ տես-
նել, որուն բողոքեմ եւ կարծեմ ազնիւ
հոգաբարձուաց անձնապատուութիւնը վի-
րաւորած չեմ ըլլար եթէ զայս դործ իբր
յափշտակութիւն նկատեմ:

Ազնիւ Սան.

Կարծեմ բաւական կարողացայ հա-
կըցնել քեզ իմ եւ ջուր իրաւունքը, եւ
Ս. Ն. Վ. հոգաբարձուաց կողմանէ ի գործ
դրուած յափշտակութիւն. այն կիմանամ
թէ հարցունեմ ինձ ինչ է հոգաբարձու-
թեան չափը այս յափշտակութեան մէջ:

Պատասխանեմ քեզ հաւատամ եւ հա-

ւաստեմ թէ Ն. Վ. արդի հոգաբարձու-
թիւնը բարեարտութեամբ սխալած է այս
խնդրոյն մէջ, զի ճանչեմ իւր զղացումը
եւ յուսամ թէ ընդ. Ներսի. Սաներուն հը-
րաւէր մը կարգալով օրինաւոր Սանուց
ընկերութիւն մը հաստատել չպիտի զը-
լանայ. եւ դու, ով Ազնիւ Սան, դու ալ
զայն չիպիտի այսպէս իւր սխալման
համար, զի դու ալ հաւատաս թէ նա բար-
չէ, ուստի սխալական է եւ իւր սխալն
ուղղելն գովութեան արժանի է մեզ Արդ.
ձեռք տանք բարեկամ հոգաբարձուաց
որ իւր սխալը ուղղէ, մոռնանք անցեալը
եւ օրինաւոր Սանուց ընկերութիւն մը
կազմենք այն զարդոյն յառաջադիմութեան
համար ուր երբեմն մտանք, եւ այսօր նո-
րա պարտաւոր ենք:

Մնամ հարազատ. Ս. Ն. Վ.
Մի Սան.
Մի Ի. Ս.

Լուսավորչի.

Մեծապատիւ Ստեփան Էֆէնտի
փառաշէն ի նպատակ Սանդիմեան
վարժարանին նուիրեց ազգաւորաբար
10 հատ քրտականութիւն, 10 հատ ալ
թուաբանութիւն, Նոյնպէս Միքիմեդ
Էֆէնտի Զմբուկեան 5 հատ աւալին
հատոր Անիճեալ յԱբրայե անուն վի-
պասանական գիրքը նուիրեց, յաջորդ-
հատորներն ալ հետզհետէ տալու խոստ-
մամբ:

Բնատի . . . Տէր, հաճեցէք Զեր
ազգոգրուտ լրագրաւ արձագանք ըլ-
լալ մեր խորին շնորհակալաց անուան
ազգաւոր Էֆէնտիները, որ քաջալեր
կը կանգնին սոյն վարժարանին:

Կը յուսամք թէ սոյն նման հայ-
րենեաց վառքին նախանձախնդիրք
եւ թշուառութեանց բարձման ջանկա-
ցողք օրինակաւնելով վերջիչեալ ան-
ձինք՝ իրենց նուիրեալ չեն լնայեր
դեւեմութիւն վանուհեաց դաստիարա-
կութեանը:

Ի դիմաց ընկերութեան Սանդիմեան
Տնօրէն Ժողովոյ Ատենապետ
30 սեպտ 1870

Կ. Պօլիս Թ. Էֆէ Գ. Փէրէ Գ. Գ. Գ.
Շէրիֆ ֆաշա խան

Այս շտրթու փող անունով նոր լը-
րագիր մ'ալ հրատարակիլ սկսաւ
լուսավորչութեամբ Թարգոյ կար. Մին.
Երզնկեանցիներ:

Հրատարակած նիւթերը թուրքե-
րէն եւ հայերէն լատին եւ, թերթը
փորը Մէմուայի չափ է, եւ շտրա-
թըն երեք անգամ կը հրատարակի ե-
րեքշաբթի հինգշաբթի եւ շաբաթ ա-
ռաւօտները:

Եւսմանոյ զինն է 25 ղը կան-
խիկ:

Բաժանորդագրութեան տեղն է
Աման Աթլը, ճամբը խան թիւ 5 սե-
եալը:

Այս նոր թերթն ալ գոհութեամբ
ողջունելով յաջորդութիւն կը մաղթենք:

ԾԱՆՈԹՅՈՒՆԻՐ

Տնօրէն Մ. Ա. Ստեփան խաղիւղ
եւ վիճենայի մէջ բժշկական ուսումն
յաջորդութեամբ աւարտած եւ վրկայա-
կանն (տիքով) ստացած՝ անցեալ
հինգշաբթի Կ. Պօլիս հասաւ իր կեն-
ցաղօգուտ արուեստն ի դործ դնելու:
Իւր այցելու թերթը վաւերաբար պէտք
է իմաց տան Պահճէ-Գաբուի ներքոյ
Համիտէ-Ճատտէսի թիւ 24, Պ. Ս.
Ռաֆայէլեանի դեղարանը:

Կայսերական զօրաց պիտոյից հա-
համար 5120 թօլ, անթարցու քէթէն
պէղիկն երեքաման 110 փորայի անու-
ջարկող դանուելով, անոր վերջին
դնահատութիւնը ի դործ պիտի դր-
ուի երկուշաբթի հոկտեմբեր 12 ին
ի Տարի Շուրա, ժամը 6 ին
ի Գուստի Սպարապետի

1 հոկտեմբեր 1870

Այս լրագիրը շաբաթը երկու անգամ
կը հրատարակուի, չորեքշաբթի եւ շա-
բաթ օրերը: Բաժանորդագրութեան տե-
ղին եւ Կ. Պօլիս Զինիի խանը վերք
յարկը թիւ 6 Մասիս խաղիւղապետը:

Իսկ դաւառաց մէջ հեռեւեալ հոգա-
բարձուաց սենեակները:

ԻԶՄԵՐ. Ստեփան աղա Տէմէն.

ՆԱԿՈՒԹԻՒՄ. Թորոս աղա ոսկերի:

ԱՅՏԱՅԱՅԱՐ. Թարո թիւն աղա Նազա-

թի խան.

ՏԵՐԱԳԻՏ. Խաչատուր աղա Էլ Մանան

ԿԱՌԻՆ. Կարապետ ողատուիլ Զաւ-

թարեան.

ՍՅԱՍՍՅԱՒ. Վարդան Էֆէնտի Աբրա-
եան.

ԵԱՆ. Մ. աղա խաղիւղապետ.

ՀԱՆԼԵՊ. Նիկողայոս աղա Տէր Մար-

դարեան.

ԵՐԶՆԿԵԱՅ. Բիթրգապիւր Բանդարան.

ՎԱՍ. Գրիգոր աղա Խաճանիան.

Ուրիշ քաղաքներէ ստորագրուիլ ու-
ղղուններն այս անգորէն մէկուն հետ կ'ընան
թղթակցիլ:

Պղինձ Թողաթ երկրին մէջ	9/1—10
Սալայ Գաթիմայի	հօլա 48 —22
Աթիս	» 340 —380
Բիթրէ	» 26 —28
Սուտամ	» 41/1—
Կաւաւտ Սաւաւ	Բիթ 26 —28
» Բուււլիլ	» 44 —48
Սեւաւք Գաթիլ Բէշա	» 44 —48

ԱՐՏԱՔԻՆ ԲԵՐԲ	ԴՈՒՐԵՂ
Խաչիլ Բիւս. տեսակ 100 հօլ	» 850—900
» Բ. »	» 46
Եմէն	» 232 —236
Շաւար փոշի Անդ. Կնդ.	» 232 —236
» Գաղղ. »	» —
» Ղուլ Գաղղ. »	» 280 —300
Չայ Բօնիօ	հօլան 24 —24
» Բէքօ ծաղիկ »	» 56 —65
Անաղ զաւայ	Կենդ. 890 լիւր 920
Պղպնդ (պղպնդ) »	հօլա 7/1—
Լեզակ չիլիս Պէնիկաւ »	» 440 —430
» Մաւրաւ »	» 440 —460
Զինք տախտ. 100 հօլա Գր.	» 105 —
Երկաթ ձողածեւ »	» 60 —
» տախտակ »	» 72 —
» բեւեղու »	» 70 —
Բարձիւն »	» 87 —
Բրինձ Խաղիւղ 160 Բիւլ Գր.	» 40 —41
Կարաղ եղ Ռուսիոյ ղրք.	» 43/1—
Խաղիւղ »	» 21 —24

Ա. Ռ. Ե. Ի. Տ. Ր. Ա. Կ. Ա. Ն.

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿՈՒԹԵԱՆ
3 ՀՈԿՏԵՄԲԵՐ

(ՍՏԱՆԵԱՆ ԼԻՐԱՅԻ ՀԵՏ 100 ՂԱՌՈՒՔԷՆ)

Լոնտոն 3 ամիս դուրս 14 1/1
Մանիլա » —

ԸՆԹԱՅՔ ԴՐԱՄՈՑ
3 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Անգղ. լիւրա	դուրու 140.85
Նաբօլէոն սիկի »	» 88.30
Իմբէրիալ ուոս »	» 89.25
Քըրքմից »	» 51.20
Քինդ ֆրանք »	» —
Հինդոն »	» 103.30
Պղինձ »	» 114.20

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Ա. Ր. Մ. Տ. Ի. Բ.	
Տորեն կարծր	Պէտարապիա 28 —30
» »	Աշաղ 29 —31
» »	Պալլըք 28 —30
» »	Պուրկաղ 27 —29
» »	Թէքիւրաղ 27 —28
» »	Կակուղ 30 —32
» »	Պէտարապիա 30 —32
» »	Սիրքա թոււա 27 —28
» »	Յորեն կակուղ 26 —28

» »	Վաւուս 26—28
» »	Պալլըք 26—28
Եղիպտացորեն թոււա »	—
» »	Անաւուլ 45 —
Գարի թոււա »	43 —
» »	Անաւուլ »

ՆԵՐՔԻՆ ԲԵՐԲ

ԽՈՁԱԿ ԶՈՐ	
Պուրա »	Ղուրու 2
Անաւուլ »	»
Քօլօս »	Քրանք ոչ զին կայ
Լուրի »	» եւ ոչ զնոյ
Մակա »	»
ԲԱՄՊԱԿ ԴՈՒՐԱՆ	ԴՈՒՐԱՆ
Կէյլէ »	հօլա 40 —
Խաղի »	» —
Ատանա »	» 40 —
Պարսկաստան »	» 7/1—
Վրաստան »	» 8 —

ԲՈՒՐԴ	
Անաւուլ լուսացուած »	հօլա 44 —
» չլուսացուած »	» 5/1— 5/1
Բուււլիլ լուսացուած »	» 42 —
» չլուսացուած »	» 6/1—
Վրաստան լուսացուած »	» —
» չլուսացուած »	» 16 —
» չլուսացուած »	» 22 —23
Տորոն »	» 8/1—
Եսէի Շէրի »	» 6 —

ՄԱՂԱ	
Պարսկաստան »	հօլա 41/1—
Անաւուլ »	» 40/1—
Ճերմակ »	» 6 —

ՃԵՐԲԻ	
Դայիւրի Ա. տեսակ »	հօլա 46 —
» Բ. »	» 43/1—
Լեկիւրի »	» 46 —
Թոգաթ »	» 43/1—44
Աքէլէ »	» 41 —43
Եօղլա »	» 41 —44
Զօրու »	» 41 —42

ԲԻՅԲԻԲ	
Լեկիւրի »	հօլա 48 —53
Դաստամուլ »	» 48 —50
Պէյրաղար »	» 50 —51
Չէրքէ »	» 48 —50
Վան »	» 27 —

ԱՅՏԻՄՈՐԹ	
Ամաւի »	7—8/1 կտոր մէկ 0. 1.
Եօղլա »	» » »
Անաւ »	» » »
Երզն »	» » »
Դայիւրի »	» » »
ՉԷՐ	
Ամաւի »	հօլա 7/1—
Անաւ »	» 7 —
Աւաղ »	» 40 —
Միւրի »	» 7 —